ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

11 սեպտեմբերի 2026 թվականի թիվ 113-Ա

ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԿԵՆՏՐՈՆ ԸՆԴԳՐԿՈՂ ԱՐՏԱՇԱՏ, ԱՐՄԱՎԻՐ, ԳԱՎԱՌ, ՀՐԱԶԴԱՆ, ԵՂԵԳՆԱՁՈՐ ԵՎ ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՎԱԳԱՆԻՆԵՐԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՂԱԿԱՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ՎՃԱՐՈՎԻ ԵԹԵՐԱԺԱՄԻ ՄԵԿ ՐՈՊԵԻ ԱՐԺԵՔԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշում է.***

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության մարզկենտրոն ընդգրկող Արտաշատ, Արմավիր, Գավառ, Հրազդան, Եղեգնաձոր և Իջևան համայնքների ավագանիների՝ 2026 թվականի հոկտեմբերի 25-ին կայանալիք համամասնական ընտրակարգով անցկացվող ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում վճարովի եթերաժամի մեկ րոպեի արժեքը

1) հանրային տեսալսողական հեռարձակողի

ա. «Առաջին ալիք» տեսալսողական ծրագրի համար 45 000 (քառասունհինգ հազար) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ),

բ. «Առաջինի լրատվական ալիք» տեսալսողական ծրագրի համար 18 000 (տասնութ հազար) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):

2) հանրային լսողական հեռարձակողի համար 1 800 (մեկ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ.ՀԱԿՈԲՅԱՆ**

2026թ. սեպտեմբերի 11
ք.Երևան